ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

08 օգոստոսի 2017 թվականի N 95-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով «Էլեկտրասեվկավմոնտաժ» էլեկտրատեխնիկական սարքավորումների մոնտաժման և կարգաբերման ձեռնարկություն» ՍՊ ընկերության 2017 թվականի օգոստոսի 2-ի թիվ 08-1 բողոքը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. «Էլեկտրասեվկավմոնտաժ» էլեկտրատեխնիկական սարքավորումների մոնտաժման և կարգաբերման ձեռնարկություն» ՍՊ ընկերության 2017 թվականի օգոստոսի 2-ի թիվ 08-1 բողոքի հիման վրա հարուցել վարչական վարույթ:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում ստեղծել վարչական վարույթն իրականացնող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնաժողովին՝

1) վարչական վարույթն իրականացնել՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներով.

2) ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր հանգամանքները.

3) վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին ծանուցել վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին.

4) վարչական վարույթի արդյունքում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ներկայացնել համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ հիմնավոր առաջարկություն՝ ներկայացնելով նաև վարչական ակտի նախագիծը:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
2017 թվականի օգոստոսի 08-ի թիվ 95-Ա հրամանի

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Վարդան Մարտիրոսյան	ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Ժենյա Հարությունյան	ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ
Հրայր Հարությունյան	ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի վարկային և դրամաշնորհային վարչության ներդրումային ծրագրերի բաժնի պետ
Լիլիթ Փաշայան	ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության դատաիրավական բաժնի գլխավոր մասնագետ
Գայանե Սարկիսյան	ՀՀ ԷԵԲՊ նախարարության աշխատակազմի վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչության վերլուծության և մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ